

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1133-Լ որոշման N 2 հավելվածով որպես նպատակ նախատեսվել է զարգացնել վեճերի լուծման այլընտրանքային եղանակները: Փոքր հայցապահանջներով քաղաքացիական վեճերի (գործերի) արտադատական լուծման արդյունավետության բարձրացումը իր հերթի կնպաստի, դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման վրա և կապահովի նշված գործերի ժամանակին և արագ լուծումը:

Դատական պրակտիկայի ամփոփումը, ինչպես նաև քաղաքացիական գործեր քննող դատավորների շրջանում անցկացված հարցումները թույլ են տալիս եզրակացնել, որ ողջամիտ ժամկետներում քաղաքացիական գործերի քննության սկզբունքի խախտմանը հանգեցնող հիմնական պատճառներից է քաղաքացիական գործերի ահռելի քանակը, խախտված քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար նախատեսված դատավարական կառուցակարգերի երբեմն ծանրաշարժ, ժամանակատար ու ծախսատար լինելը, ինչը հարուցում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների դժգոհությունը, բացասաբար է անդրադառնում դատարանների ծանրաբեռնվածության և դատական իշխանության հեղինակության վրա:

Թեև 2018 թվականին ընդունված նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներմուծվեցին քաղաքացիական գործերի քննության պարզեցված

դատավարական ընթացակարգերը, այնուամենայնիվ այն ամբողջությամբ չկարողացավ լուծել դատավորների գերձանրաբեռնվածության հարցը և կրճատել գործերի քննության տևողությունը, խնայել դատական համակարգի ռեսուրսները:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պարզեցված ընթացակարգերից է պարզեցված վարույթը և վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ գլուխը նվիրված է պարզեցված վարույթին, համաձայն որի ի թիվս այլ գործերի՝ պարզեցված վարույթի կարգով կարող են քննվել հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջները: Պարզեցված վարույթը հիմնականում նախատեսված է ակնհայտորեն պարզ և/կամ համեմատաբար փոքր հայցագին ունեցող հայցերով քաղաքացիական գործերի քննության և լուծման համար:

Վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է ՔԴՕ-ի «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 43-րդ գլխի շրջանակներում, համաձայն որի վճարման կարգադրության արձակման վարույթը թույլատրելի է միայն որոշակի դրամական պահանջով, բացառություն այն դեպքի, երբ այն կապված է դեռևս չկատարված հանդիպակաց պարտավորությունների հետ: Նշված վարույթի շրջանակներում դատարանը արձակում է անվիճելի (չվիճարկվող) դրամական պահանջներով կարգադրություն: Հետևում է, որ վճարման կարգադրություն չի կարող արձակվել այնպիսի դրամական պահանջներով, որոնց չափը որոշելու համար ֆորմալ դատավարության կանոնների պահպանմամբ պետք է իրականացվեն դատավարական օրենսդրությամբ կարգավորվող որոշակի դատավարական գործողություններ՝ նշանակվի փորձաքննություն, հարցաքննվեն փորձագետներ, մասնագետներ, վկաներ, կատարվի իրեղեն ապացույցների գնություն և այլն:

Այսինքն՝ նշված վարույթների շրջանակներում իրականացվում են մի դեպքում փոքր հայցագին ունեցող գործերի քննություն, մյուս դեպքում դատարանը առանց ֆորմալ դատավարական գործողություններ իրականացնելու արձակում է վճարման կարգադրություն:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ներկայումս դատարանների ծանրաբեռնվածությունը մեծապես պայմանավորված է գումարի բռնագանձման պահանջով հայցադիմումների և վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումների մեծ ծավալով, մասնավորապես՝ 2020 թվականից 2022 թվականի ընթացքում ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել շուրջ 441.128 հայցադիմում, որից 395,149-ը եղել են գումարի բռնագանձման պահանջի մասին: Մասնավորապես՝ 2020 թվականին ընդհանուր իրավասության դատարան մուտքագրված 104.465 հայցադիմումներից 92.543-ը, 2021 թվականին՝ 164.187

հայցադիմումներից 150.923-ը և 2022 թվականի ընթացքում 172.476 հայցադիմումներից 151.683-ը եղել են գումարի բռնագանձման պահանջի մասին: Ստացվում է, գումարի բռնագանձման պահանջով հայցադիմումները կազմում են Դատարան մուտքագրված հայցադիմումների ընդհանուր թվի 90 տոկոսից ավելի: Ինչ վերաբերում է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումներին, ապա 2020 թվականից 2022 թվականի ընթացքում Դատարան է ներկայացվել 236,696 վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում, որից՝ 2020 թվականին՝ 88,372-ը, 2021 թվականին՝ 117,766-ը և 2022 թվականին՝ 30,558-ը:

Հարկ է ընդգծել, որ նշված գործերով մեծ թիվ են կազմում կապի, կոմունալ ոլորտների՝ գազի, ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարում իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև բանկերի, ապահովագրական կազմակերպությունների կողմից ներկայացված հայցադիմումները և դիմումները: Թեև ինչպես արդեն նշել ենք, նշված գործերի քննությունը իրականացվում է պարզեցված ընթացակարգերի միջոցով, այնուամենայնիվ դա չի թեթևացնում դատավորների ծանրաբեռնվածությունը և նշված վարույթներով սահմանված ժամկետներում հնարավոր չի լինում կայացնել դատական ակտերը:

Վերոնշյալ խնդիրների լուծման տարբերակ կարող է հանդիսանալ գումարի բռնագանձման պահանջներով գործերի լուծման այլընտրանքային արդյունավետ մեխանիզմների ներդրումը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը և արդար դատաքննության տարր հանդիսացող ողջամիտ ժամկետում գործերի քննության սկզբունքի պահպանմանը:

Նախագծով առաջարկվում է գումարի բռնագանձման պահանջներով գործերի մի մասը հանձնել նոտարների քննությանը՝ նախատեսելով հստակ չափանիշներ, որոնք թույլ կտան սահմանելու նոտարին ենթակա գործերի շրջանակը: Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նոտարի կողմից նման գործերի քննության հնարավորության հարցին՝ դատական պաշտպանության իրավունքի համտեքստում:

ՀՀ սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի անբաժանելի մասն է կազմում անձի արդար դատաքննության իրավունքը: Անձի արդար դատաքննության իրավունքը երաշխավորված է ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածով, որը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը: Արդար դատաքննության իրավունքի անքակտելի տարրերից է անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, ինչը ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի իր իրավունքների և օրինական շահերի ենթադրյալ խախտման դեպքում դրանց պաշտպանության նպատակով դիմելու դատարան:

Դատական պաշտպանության իրավունքը անձի հիմնական իրավունքներից մեկն է, որի պաշտպանությամբ երաշխավորվում են նաև անձի բոլոր մյուս հիմնական իրավունքները: Հետևաբար, թեև դատական պաշտպանության իրավունքը կարող է

ենթարկվել որոշակի սահմանափակումների, սակայն այդ սահմանափակումներն իրենց բնույթով չպետք է լինեն այնպիսին կամ այն ծավալի, որ խաթարվի դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը, քանի որ հակառակ պարագայում կարող է առաջանալ նաև անձի բոլոր այն հիմնական իրավունքների ապօրինի սահմանափակման վտանգ, որոնց պաշտպանությանն ուղղված է անձի դատական պաշտպանության իրավունքը:

ՀՀ սահմանադրության 78-րդ հոդվածը ամրագրում է համաչափության սկզբունքը, որի հիման վրա տեղի է ունենում հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը: Այլ կերպ ասած՝ որևէ հիմնական իրավունքի սահմանափակում կարող է համարվել իրավաչափ, եթե այդ սահմանափակումը համապատասխանում է ՀՀ սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքից բխող պահանջներին: Համաձայն Սահմանադրության 78-րդ հոդվածի՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

ՀՀ սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համակողմանի անդրադարձ է կատարել Սահմանադրական դատարանը: Մասնավորապես՝ ՍԴՈ-1546 որոշմամբ Սահմանադրական դատարանը ընդգծել է, որ *որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.*

1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Ինչպես կարելի է նկատել, համաչափության սկզբունքի առաջին պահանջը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է: Ընդ որում, ինչպես բխում է Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1546 որոշումից, հիմնական իրավունքի սահմանափակման նպատակը լեգիտիմ է ոչ միայն այն դեպքում, երբ այդ սահմանափակման հնարավորությունն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ սահմանադրությամբ, ինչպես, օրինակ, մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պարագայում, այլև այն դեպքում, երբ օրենսդիրն ինքն է

բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Այլ կերպ ասած՝ նույնիսկ այն դեպքերում, երբ որևէ հիմնական իրավունքի սահմանափակման հնարավորությունն ուղղակիորեն Սահմանադրությամբ նախատեսված չէ, դա դեռևս չի նշանակում, որ այդ իրավունքը չի կարող սահմանափակվել: Այդ իրավունքի սահմանափակում ևս հնարավոր է, եթե, իհարկե, պահպանվում են համաչափության սկզբունքից բխող պահանջները:

Ասվածը հավաստվում է նաև Սահմանադրական դատարանի կողմից ՍԴՈ-1654 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով: Այդ որոշմամբ Սահմանադրական դատարանը, քննարկելով առանձին վարչական ակտերի դատական կարգով բողոքարկման համար արտադատական կարգի սպառման նախապայմանի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը, կարևորել է բացահայտել՝ արդյո՞ք վիճարկվող իրավակարգավորումներով իրավունքների պաշտպանության արտադատական միջոցները որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նախապայման սահմանելը հետապնդում է իրավաչափ նպատակ, և առկա՞ է արդյոք համաչափություն գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև՝ Սահմանադրության 78-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան: Այլ կերպ ասած՝ թեև Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածները չեն սահմանում անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման որոշակի նպատակներ, համաչափության սկզբունքը կիրառելի է նաև դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման նկատմամբ, ինչից հետևում է, որ նախ՝ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը չի հակասում Սահմանադրությանը, երկրորդ՝ այդ սահմանափակումը պետք է տեղի ունենա համաչափության սկզբունքի բոլոր պահանջների և տարրերի պահպանմամբ:

Ինչպես հետևում է վերոգրյալից, այն դեպքերում, երբ Սահմանադրությունը չի բացահայտում որևէ հիմնական իրավունքի սահմանափակման նպատակները, պետությունը՝ ի դեմս օրենսդիր մարմնի, այդ նպատակի սահմանման հարցում ձեռք է բերում հայեցողության որոշակի շրջանակ: Այդ հայեցողությունն իրացնելու արդյունք է, որ, ինչպես բխում է անձի դատական պաշտպանության իրավունքը սահմանող ՀՀ օրենսդրության համակողմանի ուսումնասիրությունից, առկա են այդ իրավունքի սահմանափման մի շարք դեպքեր, երբ, մի դեպքում, սահմանվել են դատական պաշտպանության իրավունքի իրացման որոշակի նախապայմաններ (ինչպես, օրինակ, վարչական ակտերի դատական բողոքարկման պարագայում), մեկ այլ դեպքում որոշակի դատական գործառույթներ փոխանցվել են այլ՝ ոչ դատական մարմինների, մյուս դեպքում օրենքով ստեղծվել են վեճերի լուծման այլընտրանքային մարմիններ, որոնք նույնպես իրականացնում են անձանց իրավունքների պաշտպանություն վերջիններիս կողմից իրենց հանձնված վեճերի ըստ էության քննության և լուծման

միջոցով: Ասվածի շրջանակում կարևոր է որոշակի դատական գործառույթներով այնպիսի սուբյեկտների օժտելու հնարավորության հարցի պարզաբանումը, ինչպիսին են նոտարները:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/5014/05/09 վարչական գործով 13.05.2015թ.-ին կայացրած որոշմամբ անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում նոտարների իրավական վիճակին վերաբերող կարգավորումների վերլուծությանը և հանգել մի շարք կարևոր ուղենիշային հետևությունների: Մասնավորապես՝ այդ որոշմամբ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նոտարներն իրականացնում են հանրային նշանակության գործառույթներ, որոնք սահմանվում են օրենքով: Նոտարները, ինչպես պետական մարմինները և պաշտոնատար անձինք, իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են ոչ թե մասնավոր անձանց ներհատուկ կամքի ազատ արտահայտմամբ, այլ գործում են հանրային իշխանությանը ներհատուկ ընթացակարգերի շրջանակներում: Այսինքն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Միաժամանակ, նոտարը մի շարք իրավահարաբերություններում հանդես է գալիս նաև որպես անհատ ձեռնարկատեր, ինքնուրույն, իր ռիսկով իրականացնում է գործունեություն, որի նպատակը շահույթ ստանալն է, իր ունեցած պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով և կրում է պատասխանատվություն՝ իր կողմից այլ անձանց պատճառված վնասի համար: Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ նոտարի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում ունի երկակի՝ հանրային-իրավական և մասնավոր-իրավական բնույթ:

Նոտարների իրավական կարգավիճակի որոշ կարևոր տարրեր բացահայտել է նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը: Մասնավորապես՝ 10.05.2016թ. ՍԴՈ-1271 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների իրականացումը պարզվիրակել է նոտարին: Ընդ որում, նոտարին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տալիս է Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա նշված են «Հայաստանի Հանրապետություն» բառերը, և որով վավերացվում են համապատասխան փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալն ընդգծում է տվյալ գործառույթի կարևորությունը հանրային կյանքի կազմակերպման տեսանկյունից: Ուստի նոտարը չի կարող պարզապես համարվել որպես իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր:

Այսպիսով, նոտարները ՀՀ իրավական համակարգում գործող առանձնահատուկ սուբյեկտներ են, որոնց մատուցած ծառայությունները վճարովի են, սակայն, դրա հետ մեկտեղ, **նրանց բնորոշ է հանրային-իշխանական լիազորությունների իրականացումը, որոնք նոտարներին պատվիրակվել են օրենքով:** Ընդ որում, հատկանշական է, որ ներկայումս գործող օրենսդրությամբ արդեն իսկ նոտարներին վերապահված են իրենց բնույթով դատական գործառույթներ, ինչպիսին է, օրինակ, կատարողական մակագրության թերթ տալը: Կատարողական մակագրության թերթ տալու վերաբերյալ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների վերլուծությունից պարզ է դառնում, որ կատարողական մակագրության թերթ տալն իր բնույթով համեմատելի է դատական գործառույթի հետ՝ միայն թե առանց դատական գործ հարուցելու և քննելու երկարատև գործընթացի: Ավելին, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 82.3 հոդվածը սահմանում է, որ կատարողական մակագրության թերթը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Այսինքն՝ քննարկվող նոտարական գործողությունն ապահովված է նաև պետական հարկադրանքով, իսկ հարկադիր կատարումը դատական ակտերին բնորոշ էական հատկանիշներից մեկն է:

Բացի այդ, 2022 թվականի դեկտեմբերի 23-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Նոտարիատի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-586-Ն օրենքը, որով նախատեսվել է նոտարական գործողությունների շարքում ավելացնել նաև նոտարի կողմից վճարման կարգադրություն արձակելը: Ըստ կարգավորման վճարման կարգադրություն արձակելու դիմումը նոտարին կարող է ներկայացվել այն դեպքերում, երբ կողմերը իրենց միջև կնքված պայմանագրով համաձայնել են պայմանագրից բխող որոշակի դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացնել նոտարին:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ արդեն իսկ նոտարներին դատական բնույթի որոշակի գործառույթների պատվիրակումը, ինչպես նաև նոտարների՝ հանրային-իրավական կարգավիճակ ունենալու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի հետևությունները թույլ են տալիս պնդելու, որ ներկայումս դատական իշխանությանը վերապահված այնպիսի գործերի, ինչպիսին է պարզեցված վարույթի շրջանակներում քննության ենթակա գումարի բռնագանձման պահանջով հայցադիմումների քննությունը կամ վճարման կարգադրություններ արձակելը, կարող են փոխանցվել նոտարներին:

Նոտարներին գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու լիազորություն տրված է նաև այլ երկրների օրենսդրությամբ: Մասնավորապես՝ **Հունգարիայի** օրենսդրության համաձայն՝ նոտարները կարող են վճարման կարգադրություն արձակել, եթե պահանջի չափը կազմում է 9,500-ից 95,000 ԱՄՆ

դոլար¹: Պարտատիրոջ պահանջը չի կարող հավաստվել լրացուցիչ ապացույցներով: Վճարման կարգադրությունը դառնում է վերջնական և պարտադիր, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ:

Նոտարները օժտված են վճարման կարգադրություն արձակելու լիազորությամբ **Իսպանիայում**: Ընդ որում, Իսպանիայում պահանջի չափին նշանակություն չի տրվում: Անհրաժեշտ է, որպեսզի պահանջը լինի որոշակի, ժամկետանց և կատարման ենթակա:

Լեհաստանում նախատեսվում են օրենսդրական փոփոխություններ, որոնցով նոտարներն իրավունք են ունենալու վճարման կարգադրություն արձակելու, եթե պահանջի օրինականությունը չի վիճարկվում, իսկ պահանջը անվիճելի է համարվում, եթե այն բխում է պաշտոնական փաստաթղթից, պարտապանի ստանձնած միակողմանի պարտավորությունից կամ պարտատիրոջ և պարտապանի միջև ստորագրված համաձայնությունից: Հատկանշական է, որ Լեհաստանում յուրաքանչյուր նոտարի թույլատրվում է մեկ ամսվա ընթացքում արձակել 200-ից ոչ ավելի վճարման կարգադրություն:

Հարկ է նաև նշել, որ թվարկված երկրներում անձը իրավունք ունի նոտարին դիմել՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք նրա այդ իրավունքը նախատեսված է պարտապանի հետ կնքված պայմանագրով, թե ոչ:

Լիտվայի օրենսդրությամբ նոտարն իրավունք ունի կատարողական մակագրություն կատարելու ոչ միայն իր իսկ վավերացրած գործարքի, այլև հիփոթեքի պայմանագրով պարտատիրոջ նախաձեռնությամբ պարտքի բռնագանձման առնչությամբ:

Նոտարներին դատական գործառույթների՝ տվյալ դեպքում վճարման կարգադրություն արձակելու լիազորության տրամադրումը վեճերի այլընտրանքային լուծման՝ ամբողջ աշխարհում լայնորեն ճանաչված և կիրառվող մեխանիզմի մասնակի դրսևորում է:

Տեսության մեջ չի ձևավորվել վեճերի այլընտրանքային լուծման հասկացության վերջնական սահմանումը, սակայն առկա մոտեցումների բազմազանության մեջ միակարծություն է առկա վեճերի այլընտրանքային լուծման այն էական հատկանիշի շուրջ, որ այդ մեխանիզմը պետական արդարադատության իրականացմանն այլընտրանք համարվող ավելի պարզեցված և ճկուն համակարգ է, որի ընտրությունը պայմանավորված է այդ մեխանիզմի ունեցած մի շարք առավելություններով: Մասնավորապես՝ որպես վեճերի այլընտրանքային լուծման առավելություններ՝ հիմնականում առանձնացվում են հետևյալ հանգամանքները.

- ընթացակարգի պարզ լինելը, ընթացակարգային և ապացուցման խիստ կանոնների բացակայությունը,
- վեճի լուծման առավել սեղմ ժամկետները,

¹ Տե՛ս, <https://www.warwicklegal.com/news/192/hungary-changes-in-the-rules-of-payment-order-procedures>

- վեճերի լուծման այլընտրանքային միջոցի կիրառման դիմելով՝ կողմերը որևէ ռիսկի չեն ենթարկվում և ոչինչ չեն կորցնում, քանի որ նույնիսկ այդ մեխանիզմով արդյունքի չհասնելու պարագայում կարող են դիմել իրենց իրավունքների դատական պաշտպանության,

- այլընտրանքային լուծումն արդյունավետ է հատկապես որոշակի ոլորտի վերաբերյալ ծագած վեճերի լուծման առումով :

Վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմի դերն ու նշանակությունը անձանց իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման և վեճերի լուծման գործում իր 09.10.2012 թվականի ՍԴՈ-1051 որոշմամբ կարևորել է նաև Սահմանադրական դատարանը: Այդ նույն գաղափարը Սահմանադրական դատարանը վերահաստատել է 08.12.2020թ. թիվ ՍԴՈ-1571 որոշմամբ՝ նշելով, որ բացառված չէ վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառմամբ դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և/կամ այլ իրավաչափ նպատակ հետապնդող նկատառումներից ելնելով՝ տարբեր արտադատական ինստիտուտների և ընթացակարգերի ներդրումը վեճերի լուծման ներպետական համակարգում: Այդուհանդերձ, դա պետք է իրականացվի դատարանի մատչելիության և արդար դատաքննության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո: Մասնավորապես, պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել, որ կիրառված սահմանափակումներն այն աստիճանի չսահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ապահովել սահմանափակման նպատակի իրավաչափությունը, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անձի արդար դատաքննության իրավունքի տարր կազմող արդարադատության մատչելիության իրավունքի վերաբերյալ իր ձևավորած նախադեպային պրակտիկայում բացահայտել է այն պահանջները, որոնց պետք է համապատասխանի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դատարանը:

Նախքան այդ պահանջներին անդրադառնալը նշենք, որ իր մի շարք որոշումներում մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետևողականորեն զարգացրել և ամրապնդել է այն մոտեցումը, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից ամենևին պարտադիր չէ, որ տրիբունալը լինի երկրի ստանդարտ դատական համակարգում գործող ընդհանուր իրավասության դատարան (XhoXhaj-ն ընդդեմ Ալբանիայի, 2021, § 284):

Փաստը, որ «տրիբունալ» իրականացնում է բազմաթիվ գործառույթներ (վարչական, նորմատիվ, հաշտարար և կարգապահական), չի կարող ինքնին մարմնին խոչընդոտել համարվելու «տրիբունալ» (H.-ն ընդդեմ Բելգիայի, 1987, § 50):

«Տրիբունալը» իրենից կարող է ներկայացնել մարմին, որը կոչված է լուծելու սահմանափակ թվով հատուկ հարցեր՝ պայմանով, որ այն միշտ տրամադրում է անհրաժեշտ երաշխիքներ (Lithgow և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, 1986, § 201):

Այսպիսով, ակնհայտ է, որ ՄԻԵԴ-ի ձևավորած պրակտիկայի համաձայն՝ անձի դատաքննության իրավունքը համարվում է լիարժեք իրացված ոչ միայն այն պարագայում, երբ վերջինիս վեճը քննվել է տվյալ պետության դատական համակարգի մաս կազմող դատական մարմնի կողմից, այլև, երբ գործը քննվել և լուծվել է թեկուզև դատական մարմին չհանդիսացող, սակայն ՄԻԵԴ-ի կանխորոշած տրիբունալի չափանիշները բավարարող անկախ մարմնի կողմից:

Այն պահանջները, որոնց պետք է համապատասխանի տրիբունալը կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից, բացահայտված են ՄԻԵԴ-ի տարբեր որոշումներով, որոնց ամփոփման արդյունքում կարելի է առանձնացնել հետևյալ պահանջները.

- խնդիրը վերջնական լուծելու կարողությունը, երբ տրիբունալի որոշումները պետք է լինեն պարտադիր և չպետք է կասկածի տակ դրվեն (Gudmundur Andri Astraodsson-ն ընդդեմ Իսլանդիայի, 2020, § 238),
- տրիբունալը իրեն վերապահված վեճը լուծելու առումով պետք է ունենա լիարժեք իրավասություն (Mutu and Pechstein-ն ընդդեմ Շվեյցարիայի, 2018, § 139),
- տրիբունալը պետք է ստեղծված լինի օրենքի հիման վրա,
- տրիբունալը պետք է բավարարի անկախության պահանջը (Gudmundur Andri Astraodsson-ն ընդդեմ Իսլանդիայի, 2020, § 231),
- տրիբունալը պետք է բավարարի անկողմնակալության պահանջը (Gudmundur Andri Astraodsson-ն ընդդեմ Իսլանդիայի, 2020, § 231),
- իր ընթացակարգով կողմերին տրամադրի իրենց իրավունքներն իրացնելու լիարժեք երաշխիքներ (Le Compte, Van Leuven և De Meyere-ն ընդդեմ Բելգիայի, 1981, § 55):

Տրիբունալի կողմից կայացված որոշումների կատարման իրավունքը դատարան դիմելու իրավունքի բաղկացուցիչ մասերից է: Հետևաբար այս առումով կարևոր է, որ տրիբունալը իրավասու լինի պարտադիր որոշում կայացնելու:

Տրիբունալի որոշումների՝ կասկածի տակ չդրվելու իրավունքի առումով էական է, որպեսզի տրիբունալն օժտված լինի վերջնական որոշում կայացնելու իրավասությամբ: Այս առումով մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր Sovtransavto Holding-ն ընդդեմ Ուկրաինայի գործով կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատական համակարգերը, որոնցում վերջնական վճիռները անընդհատ ենթակա են վերանայման և կարող են վերացվել, խախտում են 6-րդ հոդվածի 1-ին կետը:

Վերոհիշյալ երկրորդ պահանջի համատեքստում կոնվենցիայի 6-րդ հոդվածը ՄԻԵԴ-ը պահպանված է համարում ոչ միայն այն դեպքում, երբ դատական որոշում

կայացնելու պարտականություն ունեցող մարմիններն են համապատասխանում 6-րդ հոդվածի պահանջներին, այլև այն դեպքում, երբ այդ մարմինները այդ պահանջներին չեն համապատասխանում, սակայն ենթակա են համապատասխան վերանայման «լիարժեք իրավասություն ունեցող դատական մարմնի կողմից», որոնք ապահովում են 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքները (Albert and Le Compte-ն ընդդեմ Բելգիայի, 1983, § 29):

Օրենքի հիման վրա ստեղծված լինելու պահանջն ուղղված է տրիբունալի անկախության ապահովմանը: Այդ պահանջը նշանակում է, որ տրիբունալը պետք է սահմանված լինի օրենքին համապատասխան: Ինչպես նշում է ՄԻԵԴ-ը իր Gudmundur Andri Astradsson-ն ընդդեմ Իսլանդիայի վճռում, տրիբունալի՝ օրենքի հիման վրա ստեղծված լինելն անհրաժեշտ է դատական իշխանությունը ցանկացած ապօրինի կամ անտեղի արտաքին ազդեցությունից զերծ պահելու նպատակով: Այդ նույն վճռով՝ § 224-228, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ տրիբունալի օրինականությունը պետք է ներառի ինչպես դրա կազմը յուրաքանչյուր գործով, այնպես էլ դատավորների սկզբնական նշանակման գործընթացը: Ընդ որում, դատարանը § 207-ում առանձնահատուկ ընդգծել է այն հանգամանքը, որ օրենսդիր կամ գործադիր մարմինների կողմից դատավորների նշանակումը ինքնին թույլատրելի է, եթե այդ նշանակումներն ազատ են ազդեցությունից կամ ճնշումներից:

Օրենքի հիման վրա ստեղծվելու պահանջն ուղղված է տրիբունալի հաջորդ երկու անհրաժեշտ հատկանիշների՝ անկախության և անաչառության ապահովմանը: Անկախությունը, իր հերթին, կարելի է բնորոշել որպես անհրաժեշտ անձնական և ինստիտուցիոնալ անկախություն, որն էլ անհրաժեշտ պայման է անկողմնակալության համար: Denisov-ն ընդդեմ Ուկրաինայի գործով մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարևոր արձանագրում է կատարել առ այն, որ տրիբունալի անկախության կամ անկողմնակալության խախտում չի կարող դրսևորվել այն դեպքերում, երբ տրիբունալի որոշումը ենթակա է եղել համապատասխան վերահսկողության այնպիսի դատական մարմի կողմից, որն ունեցել է «լիարժեք իրավասություն» և ապահովել է համապատասխան երաշխիքները՝ շտկելով վիճելի խախտումները:

ՄԻԵԴ-ն առանձնացրել է տրիբունալի անկախության գնահատման հետևյալ չափանիշները՝

- ա. դրա անդամների նշանակման ձևը,
- բ. նրանց պաշտոնավարման ժամկետները,
- գ. արտաքին ճնշումից պաշտպանվելու երաշխիքների առկայությունը,
- դ. անկախության արտաքին դրսևորումների առկայությունը:

Օրենսդիր կամ գործադիր մարմինների կողմից դատավորների նշանակումը ամենևին չի ենթադրում կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Ավելին, Bochan-ն ընդդեմ Ուկրաինայի գործով կայացված վճռի § 71-ում դատարանն արձանագրել է, որ գործը որևէ դատարանի հանձնելը ներպետական թույլատրելի հայեցողության

շրջանակում է, եթե կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները պահպանված են:

Պաշտոնավարման ժամկետների սահմանումը ևս թողնված է պետությունների հայեցողությանը: Ժամկետի սահմանումը կարևոր է այն առումով, որ դա տրիբունալի գործունեության կայունության երաշխիք է:

Ինչ վերաբերում է անկողմնակալությանը, ապա ՄԻԵԴ-ի վճիռներում տեղ գտած դիրքորոշումները վկայում են, որ տարբերակվում են դատարանի անկողմնակալության գնահատման երկու չափանիշներ՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ (օրինակ, Miqalief-ն ընդդեմ Մալթայի գործով): Սուբյեկտիվությունը բխում է դատավորի վարքագծից, որից երևում է նրա կողմնակալությունը կողմերից որևէ մեկի նկատմամբ:

Օբյեկտիվ չափանիշի դեպքում դատավորի վարքագիծը կարող է չհուշել կողմնակալ լինելու կամ չլինելու մասին, սակայն պետք է պարզել, թե արդյո՞ք դատարանն ինքնին, և ի թիվս այլ ասպեկտների, դրա կազմը, առաջարկել էր բավարար երաշխիքներ կողմնակալության հետ կապված կասկածները վերացնելու համար:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով տրիբունալին ներկայացվող վերջին պահանջին՝ կողմերին իրենց իրավունքներն իրացնելու լիարժեք հնարավորություններ ընձեռելուն, ապա դրա տակ ի նկատի է ունեցվում պաշտպանության միջոցների հավասարության սկզբունքը, որը նշանակում է, որ քննվող գործի յուրաքանչյուր կողմ պետք է խելամիտ հնարավորություն ունենա ներկայացնել իր գործը դատարանին այնպիսի պայմաններում, երբ կողմերից որևէ մեկը հակառակ կողմի նկատմամբ ակնհայտ առավելություն չունի: Պետք է նշել, որ այս սկզբունքն իրենից ենթադրում է կողմերից յուրաքանչյուրի իրավունքը՝ վկաների խաչաձև հարցաքննության, ապացույցներին ծանոթանալու, ինչպես նաև յուրաքանչյուրի իրավունքը գրավոր պատասխանել մյուս կողմի փաստարկներին, հայտարարություններին (տե՛ս Կրեսն ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ի վճիռը):

Հասկանալու համար, թե արդյոք նոտարը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով կարող է համարվել տրիբունալ, թե ոչ, և, դրանով պայմանավորված, գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վարույթները դատարանների իրավասությունից նոտարներին փոխանցելը արդյոք անձի դատական պաշտպանության իրավունքի խախտման վտանգ է ստեղծում, թե ոչ, պետք է պարզել, թե արդյոք նոտարը Կոնվենցիայի 6-րդ հոդվածից բխող և ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայում ձևավորված տրիբունալի հատկանիշներին համապատասխանում է, թե ոչ:

Առաջին պահանջը խնդիրը վերջնական լուծելու կարողությունն է, երբ տրիբունալի որոշումները պետք է լինեն պարտադիր և չպետք է կասկածի տակ դրվեն:

Նոտարը բավարարում է նաև հաջորդ՝ օրենքի հիման վրա ստեղծվելու պահանջը, քանի որ Հայաստանի Հանրապետությունում գործում է «Նոտարիատի

մասին» առանձին օրենք, որը համապարփակ կարգավորում է նոտարի գործունեության, պաշտոնում նշանակման, պաշտոնից ազատման և բոլոր մյուս իրավահարաբերությունները:

Նոտարի անկախության երաշխիքներին, թեև անուղղակիորեն, սակայն անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը իր վերոհիշյալ՝ թիվ ՎԴ/5014/05/09 վարչական գործով 13.05.2015 թվականի որոշմամբ՝ դրանում ընդգծելով այն, որ նոտարները նշանակվում են պաշտոնադատ անձանց համար օրենքով հատուկ սահմանված կարգով, և նոտարները կարգապահական պատասխանատվության են ենթարկվում, նրանց լիազորությունները դադարում են նույնպես օրենքով սահմանված հատուկ հիմքերի առկայության պայմաններում և հատուկ կարգով: Հենց նշված հանգամանքներն են նոտարների գործունեության անկախության հիմնական երաշխիքները, երբ հստակ օրենսդրական կարգավորումների առկայության պարագայում բացառվում է նոտարին պաշտոնից կամայական ազատելու կամ նրա նկատմամբ ներգործության տարբեր միջոցներ կամայական կիրառելու որևէ դեպքի հնարավորությունը, ինչն էլ հենց ապահովում է նոտարի անկաշկանդ գործունեությունը՝ նաև վճարման կարգադրություն արձակելու լիազորության իրացման ժամանակ: Նոտարների անկախության սկզբունքը սահմանված է նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով:

Նոտարների անկախության ապահովման բավարար օրենսդրական նախադրյալների և երաշխիքների առկայության պարագայում կարելի է վստահաբար պնդել, որ նոտարների անկողմնակալությունը օբյեկտիվ առումով ևս լիարժեք ապահովված է: Ինչ վերաբերում է սուբյեկտիվ անկողմնակալությանը, ապա նախ՝ ինչպես ՄԻԵԴ-ն է կանխորոշել իր նախադեպային պրակտիկայում, սուբյեկտիվ անկողմնակալությունը ենթադրվում է, և հակառակը պետք է ապացուցի այն վիճարկող կողմը (տե՛ս Վերստեյնն ընդդեմ Շվեյցարիայի գործը, կետ 43), երկրորդ՝ սուբյեկտիվ անկողմնակալությունը վիճարկելու իր իրավունքը կողմը կարող է իրացնել արձակված վճարման կարգադրությունը վիճարկելով:

Վերջին պահանջը կողմերին պաշտպանության հավասար միջոցներ ընձեռելն է, որը, նման գործերում որոշակի առումով ունի սահմանափակ բնույթ: Այստեղ խոսքը ոչ թե դասական մրցակցային և կողմերի իրավահավասարության վրա հիմնված դատավարություն անցկացնելու մասին է, այլ այն մասին, որ յուրաքանչյուր կողմի լաված լինելու իրավունքն ապահովվում է: Պարտատիրոջ այդ իրավունքն իրացվում է դիմում ներկայացնելով, որը քննարկվում է նոտարի կողմից, իսկ պարտապանի նույն իրավունքը՝ նոտարին առարկություն ներկայացնելով, որի դեպքում կարգադրությունը վերացվում է:

Այսպիսով, ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ ակնհայտ է, որ նոտարը իր բնույթով համապատասխանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված «տրիբունալ» հասկացությանը, ուստի նոտարի միջոցով գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վարույթ նախաձեռնելը հավասարազոր է

վճարման կարգադրություն արձակելու խնդրանքով ՀՀ դատական համակարգում գործող ընդհանուր իրավասության դատարան դիմելուն, հետևաբար չի կարող խախտել անձի դատական պաշտպանության իրավունքը:

Բացի այն, որ նոտարը վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմ է, նման լիազորությունը նոտարներին հանձնելը անձի դատարանի մատչելիության իրավունքը չի խախտում նաև այն հիմնավորմամբ, որ այդ իրավունքը բացարձակ չէ:

ՍԴՈ-1127 որոշմամբ Սահմանադրական դատարանը անհրաժեշտ է համարել տվյալ գործի շրջանակներում վկայակոչել դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000):

ՍԴՈ-1257 որոշմամբ Սահմանադրական դատարանը արձանագրել է հետևյալը. «Դատարանի մատչելիության մակարդակը կամ այդ իրավունքի էությունն սկզբունքորեն բնորոշվում է որպես մի քանի բաղադրիչների ամբողջություն: Սահմանադրական դատարանն արդարադատության մատչելիության սահմանադրաիրավական չափանիշների վերաբերյալ վերը թվարկված իր բազմաթիվ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներում, ելնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատագրված չափանիշներից, հատկանշել է հետևյալ առաջնահերթ տարրերը.

- հայցադիմում ներկայացնելու, վնասի հատուցում պահանջելու և դատարանի որոշումն ստանալու իրավական հնարավորություն,

- ընթացակարգային այնպիսի սահմանափակումների (ձևական, ժամկետային /այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման հետ կապված/ և այլն) սահմանում, որպիսիք չպետք է խաթարեն մատչելիության իրավունքի բուն էությունը,

- իրավաբանական օգնություն ստանալու կամ սեփական շահերի պաշտպանությունն անձամբ իրականացնելու անձի իրավունքի ապահովումը,

- գործով ըստ էության կայացված դատական ակտի վերջնականություն

- դատարանի վերջնական ակտի ողջամիտ ժամկետում կատարման երաշխավորում»:

ՍԴՈ-1293 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «Իր մի շարք որոշումներով (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190,

ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289) Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքնության իրավունքների երաշխավորման սահմանադրականության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատավարական գործընթացներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համատեքստում Սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ:

Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարևորել է իրավակարգավորման մի շարք սկզբունքներ, որոնք սույն գործով վեճի առարկա նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն, մասնավորապես.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման,

- ինքնին խնդրահարույց չէ վճարել բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմանները, այդ թվում բողոքարկման ժամկետները չպետք է գերակայեն կամ խոչընդոտեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել նաև դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները, որոնց համաձայն.

- այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (Luordo v. Italy, 2003թ. հոկտեմբերի 17-ի վճիռ, Staroszczyk v. Poland, 2007թ. հուլիսի 9-ի վճիռ, Stanev v. Bulgaria, 2012թ. հունվարի 17-ի վճիռ և այլն),

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalifaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000),

- սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania (application no. 3738/02), Judgment of 18 December 2007, para. 113):

Նշված դիրքորոշումները կարևորվում են հատկապես ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ մարդու արդարադատական իրավունքների իրացման օրենսդրական երաշխիքների ապահովման համար»:

Այսպիսով, ամփոփելով դատարանի մատչելիության իրավունքի թույլատրելի սահմանափակման վերաբերյալ ինչպես մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ Սահմանադրական դատարանի ձևավորած պրակտիկան՝ կարելի է եզրահանգել, որ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը թույլատրելի և իրավաչափ է, եթե՝

- այդ սահմանափակմամբ չի խաթարվում դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը,

- սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ,

- ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև առկա է համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

Վերոհիշյալ հանգամանքները կարելի է համարել դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման իրավաչափության պայմանները: Այժմ հերթականությամբ դիտարկենք հիշատակված իրավաչափության պայմաններից յուրաքանչյուրի էությունը:

ՄԻԵԴ-ը և Սահմանադրական դատարանը չեն բացահայտում, թե ինչ է նշանակում իրավունքի խաթարում: Այլ կերպ ասած՝ դատարանները չեն նկարագրում այն իրավիճակը, որի դեպքում անձի՝ արդարադատության մատչելիության իրավունքը պետք է համարվի խաթարված: Չնայած այս առնչությամբ մեկնաբանության բացակայությանը, ելնելով «խաթարում» եզրույթի նշանակությունից՝ կարելի է եզրակացնել, որ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է, եթե օրենսդրական կարգավորումներն այնպիսին են, որ անձին հիմնովին զրկում են այս կամ այն իրավիճակում դատարան դիմելու հնարավորությունից: Խոսքը վերաբերում է ոչ թե որոշակի ընթացակարգային պահանջներով անձին իր դատարանի մատչելիության իրավունքն իրացնելու համար ծանրաբեռնելուն կամ դատական պաշտպանության իրավունքի իրացման որոշ ժամանակով հետաձգմանը և նմանաբնույթ այլ՝ անձին իր իրավունքից չզրկող սահմանափակումներին, այլ անձին այնպիսի կացության մեջ դնելուն, երբ վերջինս չունի հնարավորություն իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելու: Ընդ որում, իրավունքի էության խաթարում պետք է համարել նաև այն իրավիճակը, երբ անձը ծանրաբեռնվում է ավելորդ, որևէ լուրջ նշանակություն չունեցող և նպատակ չհետապնդող այնպիսի ձևական պահանջներով, որոնք արհեստականորեն խոչընդոտում են դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը:

Հետևաբար, կարող ենք նշել, որ պարզեցված վարույթի շրջանակներում քննվող գումարի բռնագանձման պահանջնորով գործերի և վճարման կարգադրություն արձակելու վարույթների մի, չի խաթարում արդարադատության մատչելիության իրավունքի բուն էությունը: Դա բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

1. Եթե նոտարը մերժի գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը, ապա անձը կարող է այդ նույն պահանջով դիմել դատարան ընդհանուր հայցային վարույթի կարգով:

2. Անձը, ում ուղղված է նոտարի արձակած վճարման կարգադրությունը, կարող է առարկություն ներկայացնել դրա վերաբերյալ, որպիսի դեպքում նոտարը պետք է վերացնի վճարման կարգադրությունը:

3. Կողմերը իրավունք ունեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկել գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը:

Նախատեսվող օրենսդրական փոփոխությամբ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման նպատակը լեգիտիմ է, քանի որ սահմանափակումն ուղղված է անձանց համար իրենց իրավունքների պաշտպանության առավել արագ և պարզ միջոց ստեղծելուն, որին դիմելով՝ կողմերն ունենում են նույն երաշխիքները, ինչ նույն խնդրով ընդհանուր իրավասության դատարան դիմելու պարագայում: Ընդ որում, ինչպես կարևորել է ՍԴՈ-1654 որոշմամբ Սահմանադրական դատարանը, այստեղ առկա է նաև երկրորդային նպատակ՝ դատարանների գերծանրաբեռնվածության թեթևացումը: Ի դեպ, դատարանների բեռի թեթևացման համատեքստում նպատակի

լեգիտիմությունը հիմնավորելու նպատակով ՍԴՈ-1654 որոշմամբ Սահմանադրական դատարանը վկայակոչել է իր ՍԴՈ-1571 որոշումը, որով սահմանադրական դատարանն ընդգծել է վեճերի այլընտրանքային լուծման արդյունավետությունը: Այս առումով հատկանշական է նաև, որ վճարման կարգադրություն արձակելու վարույթին ենթակա են որոշակի դրամական պահանջները, երբ պահանջը հավաստված է օրենքով կամ պայմանագրով: Այսինքն՝ պահանջների ակնհայտ բնույթը ևս արդարացնում է նմանատիպ պահանջները դատական քննությունից դուրս բերելու և ավելի պարզ ու արդյունավետ կառուցակարգի ենթարկելու նպատակի լեգիտիմությունը:

Ընտրված սահմանափակման միջոցի պիտանիությունը դրսևորվում է նրանում, որ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանություն ապահովելու նպատակի իրականացման համար պիտանի միջոց կարող է լինել այնպիսի միջոցը, որն առավել արագ և պարզ է, ինչպիսին է սույն դեպքում նախատեսվող կառուցակարգը: Ընդհանուր առմամբ, պիտանի են այն միջոցները, որոնց կիրառմամբ օրենսդիրն ի գործու է հասնել առաջադրված նպատակին, այսինքն՝ ապահովված է հավանականությունը, որ արդյունքն ի հայտ կգա (տե՛ս ՍԴՈ-1546 որոշումը): Գտնում ենք, որ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վարույթով պաշտպանվող իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն ապահովելու և դատարանների բեռը նվազեցնելու նպատակներին հասնելու համար նման լիազորությունը նոտարներին տալը պիտանի միջոց է:

Նախատեսվող փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վարույթների վրա առավել նվազ պետական ռեսուրսներ վատնելու նպատակահարմարությամբ, որով ապահովվում է ոչ միայն դատարանների բեռնաթափումը, ինչն էլ, իր հերթին, անձի դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման նախադրյալ է, այլև անձին իր իրավունքների պաշտպանության առավել ճկուն միջոց է հասանելի դարձվում:

Ինչ վերաբերում է նախատեսվող միջոցի արդյունավետությանը, ապա այն արդյունավետ է այնքանով, քանի որ անփըր ամբողջովին չի զրկվում դատարան դիմելու իրավունքից: Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսվում է նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրության չեղյալ ճանաչելու գործերի վարույթը, որը հնարավորություն է տալու կողմերին վիճարկելու նոտարի կարգադրությունը դատական կարգով: Բացի այդ, նախագծով հստակ սահմանվել է, որ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու մասին նոտարի որոշումը չի զրկում դիմողին հետագայում նույն պահանջը դատարան ներկայացնելու իրավունքից:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելը նախատեսվել է որպես նոտարական գործողություն և

առանձին գլխով սահմանվել են նշված գործողությունը կատարելու հետ կապված բոլոր էական հարցերը, որոնք հանգում են հետևյալին.

1. Սահմանվել են գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի ենթակայության հստակ չափանիշներ: Այսպես, գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի քննությունը ենթակա է նոտարին, եթե դիմումով ներկայացվել է միայն գումարի բռնագանձման պահանջ (այդ թվում՝ տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների բռնագանձում), այսինքն՝ ոչ դրամական բնույթի պահանջները ենթակա չեն քննության նոտարի կողմից, բացառությամբ շարժական գույք հանդիսացող գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պահանջների: Բացի այդ, նոտարի ենթակայությանը վերապահված են միայն որոշակի դրամային շեմով և որոշակի սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների քննությունը: Այսպես, նշված վարույթի շրջանակներում կարող է ներկայացվել միայն գումարի բռնագանձման պահանջ, որի չափը չի գերազանցում է այն ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը (ներառյալ՝ տուժանքի (տուգանքի, տույժի), տոկոսների և այլ վճարների) և այն կարող է ներկայացվել հատուկ սուբյեկտների կողմից, այն է՝ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմում նոտարին կարող են ներկայացնել բանկերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև էներգետիկայի (էլեկտրաէներգետիկայի, ջերմամատակարարման, գազամատակարարման), ջրային և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձինք՝ սպառողների կամ հաճախորդների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Միաժամանակ, Նախագծով սահմանվել է, որ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումի հետ չեն կարող ներկայացվել դրամական բնույթ չկրող պահանջներ, բացառությամբ շարժական գույք հանդիսացող գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պահանջների:

2. Սահմանվել է նոտարների միջև գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումների բաշխման չափանիշը և կարգը: Այսպես, նախագծով սահմանվել է, որ Նոտարների միջև գործերի բաշխումը և վերաբաշխումը կատարվելու է հատուկ համակարգչային ծրագրի միջոցով՝ հնարավորինս ապահովելով նոտարների միջև գործերի համաչափ բաշխումը:

3. Սահմանվել են գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ի թիվս այլ պահանջների, Նախագծով հստակ սահմանվել է, որ դիմումը նոտարին ներկայացվողու է բացառապես էլեկտրոնային եղանակով:

4. Սահմանվել է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի քննության ժամկետը և կարգը: Ըստ նախագծի, եթե առկա չեն լինում նոտարին ներկայացված դիմումը վերադարձնելու կամ դիմումը

մերժելու հիմքերը, նոտարը դիմումն ստանալու օրվանից յոթօրյա ժամկետում ծանուցում է պարտապանին ստացված դիմումի մասին՝ առաջարկելով ծանուցումն ստանալու օրվանից քսան օրվա ընթացքում կատարել պարտավորությունը կամ ներկայացնել իր առարկությունները վճարման կարգադրություն արձակելու դիմումի վերաբերյալ: Եթե պարտապանը տրամադրված 20-օրյա ժամկետում առարկում է ներկայացված պահանջի դեմ կամ կատարում է վճարման պահանջը, ապա նոտարը ամբողջովին մերժում է կարգադրություն արձակելու մասին դիմումը: Եթե առարկություն չի ստացվում, ապա նոտարը արձակում է կարգադրություն:

Հարկ է նշել նաև, որ նախագծով հստակ սահմանվել է, որ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու մասին նոտարի որոշումը չի զրկում դիմողին հետագայում նույն պահանջը դատարան ներկայացնելու իրավունքից:

5. Սահմանվել են գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի վերադարձման և մերժման հիմքերը: Նախագծում առկա կարգավորման համաձայն այն դեպքերում, երբ ներկայացված դիմումը չի բավարարում օրենքով ներկայացվող պահանջներին, նոտարը կայացնում է դիմումը վերադարձնելու մասին որոշում՝ հնարավորություն տալով դիմողին այն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում դրանում մատնանշված թերությունները վերացնել և այն կրկին ներկայացնել:

6. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի քննության համար գանձվելու է միայն նոտարական գործողության վճար: Նշած գործերով դիմողները ազատված են լինելու պետական տուրք վճարումից:

7. Սահմանվել է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու հետ կապված ծախսը (նոտարական գործողության վճարը) դրա կրկնապատիկի չափով պարտապանից գանձելու կառուցակարգ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի դեմ պարտապանը առարկություն ներկայացնելու իրավունքը կարող է օգտագործել նոտարի կողմից կարգադրություն արձակելը մերժելու մասին որոշում կայացնելուն հասնելու համար, որի հետևանքով դիմողը ստիպված պետք է դիմի դատարան, նման պրակտիկայից խուսափելու համար նախագծով սահմանվել է, որ այն դեպքերում, երբ առկա է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումը «Նոտարիատի մասին» օրենքի 82.9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքով նոտարի կողմից մերժելու մասին որոշում, և դատարանն ամբողջությամբ բավարարում է նույն անձի դեմ նույն փաստական հիմքով ներկայացված պահանջը, գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու հետ կապված ծախսը (նոտարական գործողության վճարը)՝ դրա կրկնապատիկի չափով, հատուցելու պարտականությունը դրվում է պատասխանողի վրա:»:

8. Սահմանվել են գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը վիճարկելու և չեղյալ ճանաչելու հիմքերը և ընթացակարգը: Վարչական դատավարության օրենսգրքում նախատեսվել են մանրամասն կարգավորումներ գումարի բռնագանձման պահանջով նոտարի արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու հիմքերի, դիմումին ներկայացվող պահանջների, դիմումի քննության կարգի և ժամկետների մասին:

9. Սահմանվել է, որ նոտարի կողմից արձակված գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը ենթակա է լինելու կատարման Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով: Նախագծով սահմանվել է, որ կողմերի համար պարտադիր դարձած գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրության հարկադիր կատարման համար նոտարն էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, որում նշում է կարգադրության հարկադիր կատարման համար անհրաժեշտ տեղեկությունները:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

4. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի ընդունումը բխում է Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից և դրանից բխող գործողությունների ծրագրից: Մասնավորապես, նշված որոշման Հավելված 1-ում Արդարադատության նախարարության թիվ 6-րդ նպատակի («Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումներ») գործողությունների թվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում գույքագրված խնդիրների հիման վրա Քաղաքացիական դատավարության օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի փաթեթի մշակումը: Նախագիծը բխում է նաև Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշումից, մասնավորապես, նշված որոշման Հավելված 1-ի Արդարադատության նախարարության թիվ 7-րդ կետով նախատեսված («Փոքր հայցապահանջներով քաղաքացիական վեճերի (գործերի) արտադատական լուծման արդյունավետության բարձրացում») միջոցառումից:

